ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 նոյեմբերի 2023 թվականի N 1909 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1708-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով.

«3.1. Տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման նպատակով դիտարկվում են այն համայնքների հայտերը, որոնց նախորդ տարվա հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրման մակարդակը 90 տոկոս և ավելի է: Իսկ 90 տոկոսից

ցածրի դեպքում՝ սուբվենցիայի հայտի դիտարկումը ենթակա է քննարկման սույն կարգի 12-րդ կետի 7.2-րդ ենթակետով սահմանված տեղեկանք-հիմնավորման հիման վրա։».

2) որոշման N 2 հավելվածի 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.3-րդ և 7.2-րդ ենթակետերով.

«5.3) նախադպրոցական հաստատությունների, հասարակական շենքերի և քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքների կառուցման ու վերակառուցման դեպքում՝ դրանց շահագործման ու պահպանման ծախսերը համայնքային բյուջեում և միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառելու վերաբերյալ տեղեկանքը.»,

«7.2) նախորդ տարվա հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրման մակարդակը 90 տոկոսից ցածր լինելու դեպքում՝ տեղեկանք-հիմնավորումներ նշված հարկատեսակների թերհավաքագրման պատճառների և դրանց վերացմանն ուղղված ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ.».

3) որոշման N 2 հավելվածի 24-րդ կետի աղյուսակում՝

ա. «Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում», «Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում», «Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում սալարկմամբ, խճապատմամբ» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	65	65	70	75	75
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	65	65	70	75	75
Ներհամայնքային (տեղական նշանակության) փողոցների ու մայթերի կառուցում/վերակառուցում, հիմնանորոգում, բնական քարով (այդ թվում՝ չմշակված) սալարկում, խճապատում՝ համալիր բարեկարգման միջոցառումների ու տարրերի կիրառմամբ	55	60	65	70	75

»,

բ. «Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում սալարկմամբ, խճապատմամբ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

Ներհամայնքային (տեղական նշանակության) փողոցների ու մայթերի կառուցում/վերակառուցում, հիմնանորոգում, բետոնե սալիկներով սալարկում, խճապատում՝ համալիր բարեկարգման միջոցառումների ու տարրերի կիրառմամբ	25	30	35	40	45

»,

գ. «Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում» և «Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում	70	70	70	75	80
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում	35	40	45	50	60

»,

դ. «Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

Աղբահանության ծառայությունների մատուցման համար մեքենասարքավորումների, տեխնիկայի և աղբամանների ձեռքբերում	50	50	55	60	65

»,

ե. «Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում» պարբերությունը լրացնել «, բացառությամբ աղբահանության ծառայության մատուցման համար անհրաժեշտ մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի» բառերով.

4) որոշման N 2 հավելվածի 24.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24.2. Ազգային փոքրամասնություններով բնակեցված մինչև 100,0 մլն դրամ համայնքային բյուջե ունեցող համայնքների դեպքում յուրաքանչյուր ծրագրի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինն ավելանում է 15 տոկոսով:».

5) որոշման N 3 հավելվածի աղյուսակը «Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

Հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրում	*նախորդ տարվա հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրման մակարդակը ….. %*

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ